ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԴԻԶԱՅՆԻ ՄԱՍ[1]

Արմինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ armine.pet21@mail.ru
ORCID: 0009-0004-7274-1788
Հոդվածը ներկայացվել է 14.11.2023, գրախոսվել է 20.02.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-226

Ամփոփում

Զբոսայգիները քաղաքի այցեքարտերից են, քանզի դրանց առկայությունը յուրահատուկ հմայք է տալիս քաղաքային պատկերին: Երևանի զբոսայգիների առանձնահատկությունը ճարտարապետական անսամբլն է՝ ինքնատիպ շատրվաններով, արձաններով, ցայտաղբյուրներով, նաև նստարաններով և այլ հետաքրքիր բաղադրիչներով:

Երևանի այգիները կարևոր նշանակություն ունեն որպես ճարտարապետական լանդշաֆտի դիզայնի մաս և աչքի են ընկնում իրենց դիզայներական լուծումներով: Երևանի գլխավոր ճարտարապետ մեծն Ալեքսանդր Թամանյանը մայրաքաղաքի հատակագիծը նախագծել է որպես քաղաք-այգի: Հաշվի առնելով այս տարածքի կիսաանապատային կլիման՝ նա գլխավոր հատակագծի մշակման ընթացքում հույժ կարևոր նշանակություն է տվել մայրաքաղաքի կանաչապատմանը:

Կարող ենք ասել, որ Երևանի գրեթե բոլոր այգիներին բնորոշ է հուշարձանների առկայությունը:

Բանալի բառեր՝ լանդշաֆտ, Ալեքսանդր Թամանյան, Երևանի զբոսայգիներ, ճարտարապետական անսամբլ, քաղաք-այգի, Երևանի կենտրոնական զբոսայգիներ, այգու ճարտարապետություն:

Ներածություն

«Լանդշաֆտ» հասկացությունը մասնավորապես ընկալվել է որպես գեղատեսիլ բնապատկեր, որն արտացոլվել է գեղանկարչության, գրականության, ճարտարապետության մեջ: Այն իր ձևի մեջ կարելի է համարել արվեստի յուրահատուկ ստեղծագործություն: Լանդշաֆտները, ըստ էության, արտացոլում են մարդու կենսագործունեության բոլոր ձեռքբերումները և բացթողումները՝ դրանով իսկ կերտելով որևէ բնակավայրի, տարածաշրջանի և ողջ երկրի տեսողական կերպարի բնութագիրը:

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից անցկացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվող «22YR-6E004» ծածկագրով գիտական ծրագրի շրջանակներում:

Լանդշաֆտային արվեստում արտացոլված է նրա ինքնատիպությունը՝ գեղեցկացման, պահպանման և բարեկարգման հատուկ տեխնիկայի կիրառումը:

Հասարակության կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացմանը զուգընթաց մեծանում է նաև կանաչապատման պահանջը: Յուրաքանչյուր երկրում այգի ստեղծելուն նպաստել են տարբեր պայմաններ՝ կլիմայի և ռելիեֆի առանձնահատկությունները, սոցիալական կառուցվածքը, ինչպես նաև պետության հզորության աստիճանը: Ընդհանրապես զառիթափ տեղանքի վրա հիմնված կանոնավոր այգիները հաճախ կոչվում են իտալական, հարթ տեղանքով այգիները՝ ֆրանսիական, ծաղկային պարտեզ-այգիները՝ հոլանդական, լանդշաֆտային զբոսայգիները՝ անգլիական: Ճապոնական այգին առանձնանում է իր նրբագեղությամբ, մանրուքների մտածված կիրառությամբ: «Ծագող արևի» երկրի այգիների հիմնական գործառույթը լանդշաֆտների գեղեցկության մասին խորհրդածելու և գնահատանքի առիթ տալն է որոշակի դիտակետերից՝ տեռասներից, պատուհաններից և այլն:

Այգու ճարտարապետությունը հասարակության մշակույթի անփոխարինելի մասն է կազմում: Զբոսայգիները քաղաքի այցեքարտերից են, մանավանդ որ դրանց առկայությունը յուրահատուկ հմայք է տալիս քաղաքային պատկերին: Աշխարհում առավել հայտնի զբոսայգիներն են՝ Էտրետի այգիները (Նորմանդիա, Ֆրանսիա), Տիեզերական սպեկուլյացիաների այգին (Դամֆրիս-ընդ-Գալովեյ, Շոտլանդիա), Վիլլա Սելլ այգին (Պիստոյա, Իտալիա), Էդեմ նախագիծը (Կորնուոլլ, Մեծ Բրիտանիա), Մարկեսակի այգիները (Դորդոն, Ֆրանսիա), Պետերգոֆը (Սանկտ-Պետերբուրգ, Ռուսաստան), Բոբոլի այգիները (Ֆլորենցիա, Իտալիա), Կենտրոնական պարկը (Նյու Յորք, ԱՄՆ), Միրաբելի այգիները (Զալցբուրգ, Ավստրիա), Չժանցզյաձե ազգային պարկը (Չժանցզյաձե, Չինաստան), Հայդ Պարկը (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) և այլն:

Երևան քաղաքի այգիները

Երևանը նույնպես աչքի է ընկնում իր գեղատեսիլ այգիներով և դիզայներական լուծումներով: Երևանի գլխավոր ճարտարապետ մեծն Ալեքսանդր Թամանյանը մայրաքաղաքի հատակագիծը նախագծել է որպես քաղաք-այգի: Հաշվի առնելով Երևանի կիսաանապատային կլիման՝ նա գլխավոր հատակագծի մշակման ընթացքում հույժ կարևոր նշանակություն է տվել մայրաքաղաքի կանաչապատմանը:

Բնականաբար, քաղաքի զբոսայգիների անբաժանելի մասն են կազմում շատրվանները, արձանները, ինչպես նաև նստարանները: Ա. Թամանյանը Երևանը պատկերացնում էր որպես «կենտրոնակազմ քաղաք»,

որտեղ սոցիալական, բնակլիմայական և խորհրդանշական (Արարատին նայող փողոցներ) հայեցակետերը ներդաշնակված էին: Երևանը որպես քաղաք-այգի նախագծելիս ճարտարապետն առաջնորդվել է Էբենզեր Հովարդի (1850-1928)[2] գաղափարներով, այն է՝ «քաղաք-այգիները» պետք կառուցվեին մեծ քաղաքներից ոչ շատ հեռու, բնության գրկում՝ իրենց մեջ օրգանապես ներառելով քաղաքային և գյուղական կյանքի բոլոր առավելությունները: Ըստ ճարտարապետի՝ Հրազդան գետի ափին նախատեսվում էր կառուցել առողջարանային համալիր, քաղաքի հյուսիսային բարձրադիր մասում պետք է լիներ անտառանման մեծ պուրակ, որը քաղաքը պաշտպանելու էր հյուսիսային քամիներից ու փոշուց: Անչափ կարևոր էր «քաղաքի թոքերի» ստեղծումը, որը կազմելու էր ընդհանուր տարածքի մեկ վեցերորդ մասը[3]: Ճարտարապետի նախագծով Երևանը պիտի դառնար դեուրբանիզացված քաղաք-այգի[4]: Ըստ այդմ, քաղաքի կենտրոնական մասը շրջապատում էր Օղակաձև զբոսայգին, իսկ Գլխավոր պողոտան, ինչպես նաև ծառաշատ փողոցները լիովին կազմակերպում էին քաղաքի միջուկի կանաչապատումը: Անշուշտ, Երևանի գլխավոր հատակագիծը XX դ. քաղաքաշինական նշանավոր ձեռքբերումներից է: Այն նաև քաղաքական և բարոյահոգեբանական նշանակություն ունի հայ ժողովրդի համար: Մայրաքաղաքի գլխավոր հատակագծի բացատրագրի սևագրություններից մեկում Ա. Թամանյանը նշում է, որ քաղաքի գլխավոր հատակագծի վերաբերյալ իրեն պատվեր չի տրվել Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից, այլ ինքն է իր նախաձեռնությամբ այն իրականացրել, քանի որ առանց դրա հնարավոր չէր շինարարություն ծավալել[5]:

Ա. Թամանյանը կարևորել է կանաչ տարածքների բարեբեր նշանակությունը՝ գտնելով, որ կանաչով կարելի է մեղմել անավարտ կամ անհիրապույր շենքերի թողած տպավորությունը, մինչդեռ կանաչի սակավությունը բացասաբար է ազդում բնակչության աճի վրա[6]:

Երևանի այգիները առանձնանում են իրենց ճարտարապետական ու քանդակագործական ինքնատիպ լուծումներով: Քանդակը քաղաքային անսամբլի անբաժանելի մասն է կազմում և միջավայրին յուրահատուկ «համ ու հոտ տալիս»: Հետաքրքրական է, որ գրեթե բոլոր այգիներում ու զբոսայգիներում տեղադրված են քանդակներ, որոնք յուրօրինակ շունչ ու արտա-

---

[2] Նշենք, որ Հովարդի տեսությունից ոգեշնչված՝ աշխարհի տարբեր երկրների քաղաքաշինությունների մեջ սկսեցին օգտագործել նրա գաղափարները, և քաղաք-այգիներ կառուցվեցին Ֆրանսիայում (Շատենե-Մալաբրի), Գերմանիայում (Մյունխեն-Պերլախ), Ռուսաստանում (Կրատովո), Ճապոնիայում (Սենրի Յամա):

[3] Երևանը քարտեզներում և հատակագծերում 2008, 5-6, տե՛ս նաև https://yhm.am/archives/8760

[4] Ճարտարապետություն և շինարարություն (ամսագիր) 2014, 40:

[5] Մանուկյան, Թամանյան 2003, 109:

[6] Մանուկյան, Թամանյան 2003, 115:

հայտչականություն են հաղորդում տարածքին: Առանձնահատուկ հմայք է տալիս շատրվանների առկայությունը, որը քաղաքային անսամբլում ճարտարապետական, քանդակագործական տարրերի և կանաչապատման հետ միաժամանակ լայնորեն օգտագործվում է պարտեզապուրակային արվեստում: Իսկ դիզայնը դառնում է դեկորացիայի գործառութային տարր:

Երևանի գեղեցկությունը նկատել է նաև անգլիացի հայագետ, ճանապարհորդ, հասարակական-քաղաքական գործիչ Հենրի Ֆինիս Բլոս Լինչը. «Հյուսիսից՝ ավելի բարձր մակարդակից լանդշաֆտը, որտեղից մոտենում եք Էրիվանին, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ երբեք չեք մոռանա: Արարատի ամբողջ զանգվածը վերևից ներքև երևում է, բայց բարդիներն այնքան բարձր են, և այնքան պտղատու ծառեր կան, որ մզկիթի գմբեթը, եկեղեցիները և ձեր ոտքերի շուրջ սփռված քաղաքը ամբողջությամբ թաղված են կանաչի մեջ»[7]:

Հազվագյուտ և անհետացող բուսատեսակներով է հայտնի ***Երևանի բուսաբանական այգին*** (հիմնվել է 1935 թ.) (նկ. 1), որը ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի կազմում ընդգրկված գիտական, էկոկրթական, ուսումնական և ռեկրեացիոն[8] նշանակության հաստատություն է: *Երևանի կենդանաբանական* այգին (1940 թ.) նույնպես գիտահետազոտական հաստատություն է:

Ուշագրավ հանգստավայր է ***Հաղթանակի զբոսայգին («Մոնումենտ»)*** (նկ. 2), որի հուշահամալիրը հիմնվել է 1950 թ.: Նույն թվականին տեղադրվել է Ստալինի արձանը (ճարտ.՝ Ռաֆայել Իսրայելյան, քանդ.՝ Սերգեյ Մերկուրով): 1962 թ. այդ արձանը հանվել է պատվանդանից, և 1967 թ. դրա տեղում տեղադրվել է վեհաշուք «Մայր Հայաստանը» (քանդ.՝ Արա Հարությունյան, ճարտ.՝ Ռաֆայել Իսրայելյան), որը Երևանի ամենաբարձր արձանն է: Այս գեղատեսիլ քանդակը ներկայացնում է ընդհանուր հավաքական կերպար՝ խորհրդանշելով հայ ռազմական ոգուն, զինվորին սատարող, մարտի դաշտ ուղարկող, ոգևորող հայ մորը, կնոջը, քրոջը:

---

[7] Հայաստան, ճամփորդություններ և ուսումնասիրություններ, «Ռուսական Հայաստան» 1901: Ի դեպ, Հենրի Լինչը իռլանդական ազնվական տոհմից էր (տատը՝ սեբաստացի հայուհի): Հայաստան կատարած երկու ճանապարհորդությունների (1893-1894, 1898) ժամանակ իր հավաքած նյութերի հիման վրա նա գրել է լայն ճանաչում գտած «Հայաստան» աշխատությունը (1901, հայերեն համառոտ թարգմանություն՝ 1913-1914), որը կազմված է երկու հատորից՝ «Ռուսական Հայաստան» և «Տաճկահայաստան»: Աշխատությունը պարունակում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, ժողովրդագրության, հայ բանահյուսության վերաբերյալ վիճակագրական նյութեր:

[8] **Ռեկրեացիա** - (լատին.՝ recreatio՝ հանգիստ, առողջացում), բնության մեջ հանգստի կամ զբոսաշրջային ուղևորություններով (արշավներով) տեսարժան վայրեր (ազգային պարկեր, բնական, ճարտարապետական, պատմական հուշարձաններ և այլն) այցելելու եղանակով մարդկանց առողջության և աշխատունակության վերականգնում:

1970 թ. հուշահամալիրի շենքում բացվել է Հայրենական մեծ պատերազմին նվիրված թանգարանը, որը վերանվանվել է «Մայր Հայաստան» զինվորական թանգարան: Այգում գործում է հանգստի և զվարճանքի գոտի երեխաների համար: 1961 թ. Սևանա լճի ձևով կառուցվել է «Արևիկ» արհեստական լիճը (ճարտ.՝ Հովհաննես Հակոբյան):

Լիոնի (Թոխմախի) այգում (նկ. 3) է գտնվում ***Վարդավառ*** անվանումով արհեստական լիճը: 2010-2011 թթ. այգին ամբողջովին վերանորոգվել է Լիոնի քաղաքապետարանի աջակցությամբ և դարձել երկու քաղաքների բարեկամության խորհրդանիշը: Վարդավառի լիճը ստեղծվել է դեռևս մ.թ.ա. VIII դարում, Արգիշթի Ա-ի օրոք: 1578 թ. լիճը բարեկարգվել է Երևանի կառավարիչ Մեհմեդ Թոխմախ խանի կողմից և անվանվել Թոխմախի լիճ:

Իր տեսակի մեջ ինքնատիպ է Երևանի ***Հովհաննես Թումանյանի*** անվան զբոսայգին ***(Թումոյի այգի)*** (նկ. 4)՝ հիմնված Հովհ. Թումանյանի 100-ամյակի առթիվ 1970 թ.: 1973 թ. այստեղ տեղադրվել է Թումանյանի «Անուշ» պոեմի հերոսների՝ Անուշի ու Սարոյի բազալտե քանդակը, իսկ 1986 թ. կանգնեցվել է Թումանյանի մեկ այլ հերոսի՝ Լոռեցի Սաքոյի արձանը:

Երևանի կենտրոնական զբոսայգիները

Մանկական երկաթգիծը (նկ. 5-6) քաղաքամայր Երևանի տեսարժան վայրերից է: *Երկաթուղի* ունենալու գաղափարը ՀԿԿ առաջին քարտուղար Աղասի Խանջյանինն է, իսկ ճարտարապետը Միքայել Մազմանյանն է: Մանկական երկաթուղու «Հայրենիք», «Պիոներական» և «Ուրախություն» կայարանները կառուցվել են 1937 թ.: Նշենք, որ այգում բնությունն ու կառույցները միաձուլվում են հետաքրքիր ճարտարապետական լուծումներով: Թունելների դիմաց՝ այգու մուտքի մոտ առկա են ԽՍՀՄ հերոսների անուններով աղբյուրներ, իսկ վերևում՝ ժայռերի մեջ ուշադրություն է գրավում քանդակագործ Վիլյամ Պետրոսյանի «Հովազ» քանդակը:

Դիզայներական ինքնատիպ լուծումներով աչքի է ընկնում 1933 թ. հիմնված ***Մանկական այգին (Կիրովի անվան զբոսայգի)***: Այն հին շուկայի՝ Ղանթարի տեղում է: Այստեղ են տեղադրված Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի (նկ. 7), լիբանանցի գրող, փիլիսոփա, նկարիչ, բանաստեղծ Ջուբրան Խալիլ Ջուբրանի, խորհրդային բանակի գնդապետ, դիվիզիայի հրամանատար Սիմոն Զաքյանի կիսանդրիները: Նշենք, որ վերջինիս գերեզմանը ևս գտնվում է Կիրովի այգում:

Երևանի մետրոպոլիտենի «Մարշալ Բաղրամյան» կայարանին առընթեր վերակերտված ***Սիրահարների այգին*** (նկ. 8) գոյություն է ունեցել դեռևս XVIII դ. և կոչվել «***Կոզեռնի այգիներ***»: 1949 թ. ռուս բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինի ծննդյան 150-ամյակին վերանվանվել է ***Պուշկինի այգի***, 1970 թ.՝ Բարեկամության (խորհրդային ժողովուրդների «եղբայրությունը»

նշանավորելու համար), իսկ 1995 թ.՝ Սիրահարների այգի: Այգու վերակառուցման նախագիծը 2007 թ. իրականացրել է շվեյցարաբնակ լանդշաֆտային ճարտարապետ Պիեռ Ռամբախը: Զբոսայգին գեղազարդում է մեծանուն բանաստեղծ Գևորգ Էմինի քանդակը, որը կերտել է բանաստեղծի վաղեմի ընկեր Աշոտ Արամյանը՝ ընդգծելով Էմինի խոհական կերպարը: Շատերի ուշադրությունն է գրավում Ժան-Միշել Օտոնիելի[9] «Օբսիդիանե սիրտը» քանդակը: 2013 թ. այգու 5-ամյակի կապակցությամբ արահետներից մեկի եզրին դրված մետաղե քանդակը նախատեսված է կողպեքների համար:

Թատերական այգին (նկ. 9) հիմնադրվել է 1850 թ., բայց պաշտոնապես բացվել է 1910 թ.: Այն «վերածնվեց» 1898 թ.՝ Իսահակ Մելիք-Աղամալյանի՝ քաղաքագլուխ դառնալուց հետո: Ռուսաստանից և Լեհաստանից ներկրվեցին կաղնիներ, որոնք Երևանի պայմաններին հեշտ հարմարվելով՝ այգում գեղեցիկ ծառուղիներ կազմեցին: Թատերական այգին կառուցվել է եվրոպական ձևով, այդ պատճառով էլ կոչվում է «Անգլիական այգի»: Ըստ քաղաքացիների, այն այդպես են անվանել բարեկարգող օտարերկրացիները, ոմանք էլ կարծում են, որ վերևից նայելիս այգին նման է անգլիական դրոշին: 1920-ականներին այգին վերանվանել է «26 կոմիսարների», դա էլ կրճատվելով՝ դարձավ «Կոմայգի»: Այն վերածվեց պանթեոնի, որտեղ հուղարկավորվել են Մայիսյան ապստամբության ղեկավարները: 1938 թ. այգու տարածքում կառուցվեց Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի նոր շենքը: Թատրոնի շենքի կառուցումից հետո Անգլիական այգին դարձավ մշակութային օջախ:

1962 թ. Երևանի քաղաքապետ դարձած Գրիգոր Հասրաթյանը երազում էր ջրային միջանցքներով երևանյան փոքրիկ Վենետիկ ստեղծելու մասին և Կոմայգում ջրային միջանցքներ ու կամուրջներ հիմնվեցին:

Գաբրիել Սունդուկյանի արձանի (քանդ.՝ Արա Հարությունյան) հանդիսավոր բացումը տեղի է ունեցել իր անունը կրող ակադեմիական թատրոնի հիմնադրման 50-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակում 1972 թ.[10]: Իսկ ահա Պեպոյի արձանը կանգնեցվեց 1976 թ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյակի առթիվ (ճարտ.՝ Մ. Գրիգորյան, քանդ.՝ Գ. Ահարոնյան):

---

[9] Ասենք, որ Ժան-Միշել Օտոնիելին ճանաչում է բերել 1996 թ. Հռոմի Մեդիչիների պալատի բամբուկի այգու ծառերի համար նրա պատրաստած հսկայական գնդապակե վզնոցը: 2000 թ. նա նոր ոճ հաղորդեց Փարիզի Լուվրի թանգարանի մետրոյի մուտքին՝ վերափոխելով այն «Կուսակցական անձանց կրպակ»-ի (Le Kiosque des Noctambules): Օտոնիելին ձևավորել է Լուվրում իրականացվող «Կոնտրապունկտ» (Contrepoint) ցուցահանդեսի համար հիմնված թանգարանի՝ Միջագետքի սենյակները և կերտել «Արցունքների նավակը» քանդակը՝ ոգեշնչվելով կուբացի փախստականների կառուցած մի նավակով:

[10] Խանջյան 2004, 45-46:

Նկ. 1. Երևանի բուսաբանական այգին

Նկ. 2. «Մայր Հայաստան» արձանը (Հաղթ. զբոսայգի)

Նկ. 3. Հատված Լիոնի այգուց

Նկ. 4. Հովհ. Թումանյանի անվան զբոսայգին

Նկ. 5-6. Մանկական երկաթգիծը՝ իր վեհաշուք տեսքով

Նկ. 7. Ն. Ստեփանյանի հուշարձանը

Նկ. 8. Գողտրիկ անկյուն Սիրահարների այգում

Նկ. 9. Ծառուղի Թատերական այգում

Նկ. 10. Վարդանյանների այգու համայնապատկերը

Նկ. 11. Սայաթ-Նովայի հուշաղբյուրը

Նկ. 12. Կոմիտասի անվան պանթեոնը

Նկ. 13. Մարտիրոս Սարյանի արձանը համանուն պուրակում



Նկ. 14. «Կասկադ» համալիրը

Նկ. 15. Խաչքարերի պուրակը

Անշուշտ, քաղաքային դիզայնի կարևորագույն տարր է հասարակական վայրերում արձաններ և հուշակոթողներ տեղադրելը: Յուրաքանչյուր արձան հստակ գաղափարական ազդակ է հասարակության համար: Երևանյան արձանների «գլխավոր հերոսները» գրականության, ֆիլմերի, արվեստի, ռազմական ոլորտի ներկայացուցիչներ են և անցյալի հետ կապն ամրապնդելու կամ գոնե անցյալը մոռացության չմատնելու միջոց:

Մեծ ձեռքբերում կարելի է համարել Երևանի հիմնադրման 2800-ամյակի առթիվ (2019 թ.) բացված ***Վարդանյանների այգին*** (նկ. 10), որն սկիզբ է առնում Ստեփան Շահումյանի հուշարձանի դիմացից և ավարտվում Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանի մոտ: Այգին ամբողջովին կառուցված է նորագույն տեխնոլոգիաներով: Արված է կաթիլային և ցնցուղային ինքնաշխատ ոռոգման համակարգ, որտեղ առկա են 2800 շիթ ունեցող շատրվաններ: Յոթ տեսակի գրանիտե քարերով է շարվել հին հայկական գորգերի զարդանախշերով սալահատակը: Ուղեգորգն ունի երկարավուն ու նեղ կառուցվածք, որի հիմքում շեղանկյունազարդ, խոշոր հորինվածքների՝ իրար կցված շարանով բնորոշվող «Ճարտար» տիպի գորգերի գեղազարդված պատկեր է: Իրականացվել է «Խնձորեսկ» տիպի ուշ շրջանի վիշապագորգերի հիմնական հորինվածքը՝ բաղկացած բարու և չարի հավերժական պայքարը ներկայացնող արևի խորհրդանշանից ու այն շրջապատող վիշապի ութ ոճավորված պատկերներից: Խոշոր շեղանկյունազարդի կենտրոնում տեղակայված է 1680 թ. գործված «Գոհար» վիշապագորգի կենտրոնական վարդակի գծայնացված տարբերակը: Այգին կանաչապատված է 70 տեսակի 369 ծառերով, իսկ մուտքի հատվածում տեղադրված են Էրեբունի պատմական ամրոցի որմնանկարների նմանությամբ պատրաստված ցլի և առյուծի բրոնզաձույլ արձանները: Երևանի հատակագծի տեսքով շատրվանի չորս անկյուններում կառուցված ավազանների մեջ առկա են երեխաների չորս բրոնզաձույլ ջրային արձաններ («Երևակայություն», «Հոգատարություն», «Անաղարտություն», «Երջանկություն»):

Այգու ճարտարապետական տարրերի գրանիտե մակերեսներին արված զարդաքանդակներն ու այլումինե նախշերը պատրաստվել են Ալեքսանդր Թամանյանի, Ջիմ Թորոսյանի, Ռաֆայել Իսրայելյանի, Ստեփան Քյուրքչյանի և Մարկ Գրիգորյանի ստեղծած հայտնի ճարտարապետական կոթողների նախշերի նմանությամբ[11]:

Կոմիտասի անվան պուրակը գտնվում է հանճարեղ կոմպոզիտորի անունը կրող՝ Երևանի պետական կոնսերվատորիայի դիմաց: Այդտեղ տեղադրված են վարդապետ Կոմիտասի բրոնզե արձանը (քանդ.՝ Արա Հարությունյան, ճարտ.՝ Ֆենիքս Դարբինյան) և Սայաթ-Նովայի՝ սպիտակ մարմա-

[11]https://armeniasputnik.am/20190601/yerevani-kentronum-nor-aygi-e-bacvel-inch-anaknkal-e-spasum-aycelunerin-lusankarner-18920137.html

րից կերտված հուշաղբյուրը (նկ. 11, քանդ.՝ Արա Հարությունյան, ճարտ.՝ Էդուարդ Սարապյան):

Իսկ ահա ***Կոմիտասի անվան պանթեոնի*** (նկ. 12) տարածքը մինչև 1930-ական թթ. կեսերը եղել է հին գերեզմանատուն, որը տեղացիները կոչել են «Մլեր»: Այն Աղասի Խանջյանի նախաձեռնությամբ վերափոխվում է արվեստի գործիչների պանթեոնի, որտեղ ամփոփված են հայ մշակույթի մեծերի և հասարակական-քաղաքական անվանի գործիչների, ինչպես՝ երգահան Կոմիտասի, կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանի, Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, գրողներ Ալեքսանդր Շիրվանզադեի, Ավետիք Իսահակյանի, Նաիրի Զարյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի, Վիլյամ Սարոյանի, դերասաններ Հովհաննես Աբելյանի, Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի, Վահրամ Փափազյանի, Միհեր Մկրտչյանի, ճարտարապետներ Թորոս Թորամանյանի, Ալեքսանդր Թամանյանի, պատմաբան Լեոյի և այլոց աճյունները[12]:

Մարտիրոս Սարյանի անվան պուրակում (նկ. 13) տեղադրված է Մարտիրոս Սարյանի մարմարյա արձանը (քանդ.՝ Լևոն Թոքմաջյան, ճարտ.՝ Արթուր Թարխանյան, 1986 թ.): Այստեղ է գտնվում նաև «Էրեբունի-Երևան» («Կենաց ծառ») հուշարձանը (քանդ.՝ Հակոբ Փիլիպոսյան, ճարտ.՝ Ֆենիքս Դարբինյան, 1970 թ.), որը ներկայացնում է մ.թ.ա. 782 թ. Էրեբունի-Երևան ամրոցը հիմնադրած՝ Վանի թագավորության արքա Արգիշթի Առաջինին: Այն Երևանի հազվագյուտ գեղարվեստական նմուշներից է, որտեղ ուրարտական արքայի հետ միասին պատկերված է նաև թագուհին: Այգում է գտնվում նաև 2007 թ. «Տղամարդիկ» արձանախումբը (քանդ.՝ Դավիթ Մինասյան): Այգու տարածքում մշտապես գործում է նկարչական ցուցահանդես-վաճառք:

Մոսկովյան պուրակում տեղադրված են «Ամրագրիր քո ապագան» (քանդ.՝ Դավիթ Մինասյան, 2012), ինչպես նաև «Նարդի խաղացողը» քանդակները (քանդ.՝ Էդուարդ Շախիկյան, 2007): Ամերիկահայ մեծատաղանդ գրող Վիլյամ Սարոյանի արձանը գտնվում է Մոսկովյան-Մաշտոց փողոցների խաչմերուկի մերձակա մասում:

«Կասկադի» (նկ. 14) ցածրադիր հատվածում տեղադրված է մեծ ճարտարապետի՝ հայ նոր ճարտարապետության հիմնադիր, ակադեմիկոս Ա. Թամանյանի արձանը: Գաֆեսճյան քանդակների պարտեզն ընդգրկում է Կասկադի դիմացի պուրակի տարածքը, որտեղ ներկայացված են աշխարհի լավագույն մոնումենտալ քանդակներ, ինչպես, օրինակ, հանրահայտ արվեստագետներ Ֆերնանդո Բոտերոյի, Ժաումե Պլենզայի և Բարրի Ֆլանագանի ստեղծագործությունները: Կասկադի բոլոր հարթակներից հիասքանչ տեսարաններ են բացվում դեպի քաղաք: Ամբողջ համալիրը յուրօրինակ

[12] https://armeniadiscovery.com/hy/articles/lovers-park

ամֆիթատրոն է, որը ներդաշնակվում է շրջակա միջավայրի հետ: Համալիրի գլխավոր գաղափարը ազգային վերածննդի արտահայտումն է: Այդ գաղափարը իրականություն դարձնելու համար օգտագործվել են ճարտարապետական ամենատարբեր ձևեր, գեղարվեստական արտահայտչամիջոցներ ու լուծումներ: Երևանի Կասկադը կառուցված է արտ-դեկո ոճով: Այս մոնումենտալ ճարտարապետական համալիրը բաղկացած է հինգ բացօթյա տեռասներից: Կասկադում միաձուլվում են ճարտարապետական արվեստը և այգին: Շինությունը հիշեցնում է բազմայարուսային բուրգ, որի գագաթային հատվածից տեսարան է բացվում դեպի Արարատ լեռը:

Խաչքարերի պուրակը (նկ. 15) շահագործման է հանձնվել 2014 թ.: Այն ամբողջությամբ ապահովված է արտաքին մեղմ լուսավորությամբ և երեք շատրվանային համալիրներով: Այստեղ տեղադրված է 17 խաչքար: Խաչքարերը վերարտադրված են Արևմտյան Հայաստանում և Հին Ջուղայում եղած բնօրինակներից:

Ինքնատիպ և խորհրդանշական լուծումով է առանձնանում Հայաստանի Առաջին հանրապետության պետական, հասարակական գործիչ, հայոց նորագույն պետականության հիմնադիր, ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի արձանը՝ եռագույնի մեջ փաթաթված: Առաջին հանրապետության հիմնադրի արձանը տեղադրված է մետրոյի Հանրապետության հրապարակ կայարանի խորհրդային մոդեռնիստական ճարտարապետական համալիրի վրա (ճարտ.՝ Ջիմ Թորոսյան, քանդ.՝ Մկրտիչ Մինասյան, 2017 թ.): Խաչքարերի պուրակի անքակտելի մասն է կազմում հայ պետական և ռազմական գործիչ Գարեգին Նժդեհի արձանը (քանդ.՝ Գագիկ Ստեփանյան, ճարտ.՝ Ասլան Մխիթարյան, 2016 թ.):

Փոքր կենտրոնում են գտնվում բանաստեղծ, հրապարակախոս Միքայել Նալբանդյանի արձանը, ռուս և հայ ժողովուրդների բարեկամության հուշարձանը, սփյուռքահայ բարերարների ճեմուղին, ինչպես նաև Ասորական ցեղասպանության հուշարձանը, որից մի քանի մետր հեռավորությամբ՝ հայ հռչակավոր նկարիչ Հովհաննես Այվազովսկու վեհաշուք արձանը (հեղ.՝ Յուրի Պետրոսյան, ճարտ.՝ Ստեփան Քյուրքչյան): Այվազովսկու արձանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2003 թ. Կամերային երաժշտության տան մոտ[13]: Փողոցի մյուս կողմում մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի արձանն է: Այստեղ են տեղադրված «Բարեկամության ձեռքերը» քանդակը, որը կանգնեցվել է 1967 թ. և խորհրդանշում է հայ և իտալացի ժողովուրդների բարեկամությունը[14], ինչպես նաև հայ տաղանդավոր քնարերգու Վահան Տերյանի արձանը:

---

[13] Խանջյան 2004, 45:

[14] 1965 թ. Իտալիայի Կարարա քաղաքում կազմակերպված քանդակագործական բիենալեին մասնակցել է նաև Արա Հարությունյանը: Հիշարժան է այս ստեղծագործության նախապատմութ-

Տերյան և Մոսկովյան փողոցների հատման վայրում է գտնվում Հոլոքոստի և Ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանը:

Որպես ամփոփում՝ կարող ենք ասել, որ Երևանի գրեթե բոլոր այգիների խորհրդանիշը բարեկամությունն է: Ընդհանուր առմամբ, մեր այգիների կոլորիտը ամբողջացնում է հուշարձանների, ցայտաղբյուրների, շատրվանների առկայությունը:

Եզրակացություններ

Երևանի զբոսայգիները ներդաշնակորեն միահյուսվում են քաղաքի ճարտարապետական անսամբլի հետ և պատկանում են նրա այցեքարտերի ու տեսարժան վայրերի շարքին: Անվերապահորեն, այգիների առկայությունը քաղաքների կարևորագույն բաղադրիչն է. դրանք անփոխարինելի միջավայր են բնակչության լավագույն հանգստի և նրա բնականոն գործունեությունն ապահովելու հարցում: Կարծում ենք՝ ներկա օրերում ևս անհրաժեշտ է կառուցել նորանոր այգիներ, որոնք կապահովեն քաղաքը ավելի գեղատեսիլ վայրերով՝ կարևորվելով նաև առողջապահական տեսանկյունից:

Օգտագործված գրականություն

Հայաստան, ճամփորդություններ և ուսումնասիրություններ, «Ռուսական Հայաստան» 1901, h. 1, էջ 471-496, https://archive.org/details/armeniatravelsst02lync/page/n5/mode/2up (ներբեռնման օրը՝ 14.11.2022).

Մանուկյան Դ.Ս., Թամանյան Ա.Գ. 2003, Քաղաք-այգու տեսությունը և Երևանի հատակագիծը, Բանբեր Երևանի պետ. համալսարանի, N 3 (III), էջ 107-116:

Երևանը քարտեզներում և հատակագծերում 2008, ԵՔՊԹ, Երևան, էջ 5-6:

Ճարտարապետություն և շինարարություն ամսագիր 2014, N 11 (105), նոյեմբեր, Երևան, էջ 40:

Խանջյան Ա. 2004, Երևանի արձանները, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 176 էջ:

https://armeniasputnik.am/20190601/yerevani-kentronum-nor-aygi-e-bacvel-inch-anaknkal-e-spasum-aycelunerin-lusankarner-18920137.html (downloaded 14.11.2022).

https://armeniadiscovery.com/hy/articles/lovers-park (downloaded 04.09.2023).

https://yhm.am/archives/8760 (downloaded 04.09.2023).

յունը: Հայ քանդակագործը Կարարայի մարմարի հանքում տեսնում է քանդակի մասեր: Նրան տեղեկացնում են, թե դրանք Քրիստոսի արձանի դրվագներն են, որի հեղինակը աշխատանքները դադարեցրել է՝ հովանավորներ չունենալու պատճառով: Տեսնելով, որ Արա Հարությունյանը խիստ հետաքրքրված է արձանի «ճակատագրով», քարհանքի տերը նրան թույլ է տալիս վերցնել անավարտ կտորները: Կարարայի քաղաքապետարանը Հիսուսի արձանի ձեռքերը Երևան է ուղարկում, և Ա. Հարությունյանը կերտում է այս քանդակը՝ որպես երկու ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ:

ПАРКИ ЕРЕВАНА КАК ЧАСТЬ АРХИТЕКТУРНО-ЛАНДШАФТНОГО ДИЗАЙНА

Армине Петросян

Резюме

Садово-парковая зона является одной из визитных карточек города, ведь их наличие придает городскому пейзажу неповторимое очарование. Особенностью ереванских парков является архитектурный ансамбль с оригинальными фонтанами, статуями, родниками, скамейками и другими интересными компонентами.

Сады Еревана играют важную роль в архитектурно-ландшафтном дизайне и выделяются своими дизайнерскими решениями. Главный архитектор Еревана Александр Таманян спроектировал план столицы как города-парка. Учитывая полупустынный климат этой местности, архитектор при разработке генерального плана придавал ключевое значение озеленению столицы.

Можно сказать, что характерным почти для всех парков Еревана является наличие памятников.

Ключевые слова – ландшафт, Александр Таманян, парки Еревана, архитектурный ансамбль, город-парк, центральные парки Еревана, парковая архитектура.

PARKS OF YEREVAN AS PART OF ARCHITECTURAL AND LANDSCAPE DESIGN

Armine Petrosyan

Abstract

Parks are one of the visiting cards of the city, because their presence gives the city landscape a unique charm. A feature of Yerevan parks is an architectural ensemble with original fountains, statues, fountains, benches and other interesting components.

Gardens of Yerevan play an important role in architectural and landscape design and are distinguished by original solutions. The chief architect of Yerevan, Alexander Tamanyan, designed the plan of the capital as a city-park. Taking into account the semi-desert climate of this area, when developing the master plan, he attached great importance to the greening of the capital.

We can say that the presence of monuments is characteristic of almost all parks in Yerevan.

Key words – landscape, Alexander Tamanyan, parks of Yerevan, architectural ensemble, city-park, central parks of Yerevan, park architecture.